

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵԽ ԲԺՇԿԱԿԱՆ ԹՐԱԴՆ

Ամբողջ Սիսիանը զուրկէ է բժշկական որեւէ օգնութիւնից, Միայն Գորիսում կալ մի բժշկական ապահովանարան և երկու բժիշկ, որոնք կտառած են բժշկելու և մրողջ զաւառի բազմաթիւ բնակիչ-ներին Թողնելով իւր տեղում մանրամասն տեղեկութիւն տալու արդ ապահովանարանի և զաւառում տիրող հիւանդութիւնների մասին՝ արժմ կասեմ, որ Սիսիանցին զիմում է զիմաւրապէս ժողովրդական բժիշկներին, ալինքն սափրիչներին, հեքիմ-կանանց, մոռուներին (ոսկրաբուժ) և ժողովրդական գեղերին, որոնք զիմաւրապէս հետևեաբներին են *).

Ալիսացաւ. — Ձէ թի (ձիթապաղի լողի) մէջ եփում են անգլիական պղպեղ, մերսակ (շատրվան), փոքր ինչ քեսափիրի (կափօրա), մի պճեղ ոխտոր և մի ոչխտարի լողի, և հովացնելուց լեռու կաթեցնում են ականջի, մէջ:

Ականջի խցիոցը. Նոր եվբած ձուի կէսը տաք-տաք զնում են ականջին. — Գլխին տաք ջուր են ածում:

Ц. барձիքի ուռոյքը (Օպսխոլ անց.) .— Վեց մախալ շիրը, կէս մախալ ձէթով շաղուում և քաթանի վրակ քաշած. զնում ամորձակալի վրար.— Նգիպտացորենի մազմզուկ (Անոշքն Կոկуրազ, filamentae պցոմատաց) սպիրուտ. մէջ են կախում և քաթանը արս բազալյութեան մէջ թաթախութով՝ փաթթաթում ամորձակալին:

Ալյուածք.—Թանաք, մածուն, ցեխ և կամ խլինք են քսում:

Այսացաւ. — Ցաւող աչքին մէջ կաթեցնում են ազդիկ երեխաբ ունեցող կոնչ կաթը. կամ բամբակը թաթախում են նորնպիսի մօր կաթի մէջ և դնում ցաւող աչքի վրա. — Խունկը մաքուր ամանում

*). №. Զելինսկին թարգմանելով Աղջ. Հանդիսի Ա. և Բ. զըրքի մէջ տպուած ժողովրդական զեղերը՝ մրացընց նաև արև զեղերը, ստանալով մեզանից ձեռագիրը. Այդ աշխատութիւնը տպուեց Խուօսաց Կալսկերական Աշխարհագրական ընկերութեան Կովկասեան բաժնի «Խավետիա Օժդա»-ХII հատորի առաջին պրակում և արտադրուեց առանձին գրքովով. Материалы по народной медицине у армянъ и некоторые изностей Закавказья *խորագրով*.

վառում են և փոշին խառնելով եղեգնաշաքարի (тростниковый сахаръ) փոշու հետ, ձգում աչքը:—Կոժախուրի (барбарисъ, berberis vulgaris) արմատը եփում են և ջուրը բորբոքուած աչքը ձգում:—Եթի աչքի կոսկերը կոշացած են լինում՝ սոխի ջուր են կաթեցնում աչքի մէջ. մէզով լուսանում են աչքը. ոչխարի տաք թոք են դնում վերան:

Առ ամենացու:—Մանրած շաքարը բովում են, լետով բամբակը թաթախում արդ շաքարի և ապա ծիծակի (стручковый перецъ) մէջ և դնում ցաւած ատամին:—Բերանը օվլով ողոզում են:—Ցաւող ատամի վրայ մի կտոր սփառոր են դնում և միւս ծնօտի համապատասխան ատամով սեղմում:

Բարակացու:—Թոքախոտ (ЧЯХОТКА).—Առաւուները հիւանդին խմացնում են մի բաժակ տաք կաթ, հետը մի պուռ զտած և ծեծած սամիթի (уверополь) սերմ խառնելով:—Լողացնում են տաք ջրում:—Շան մայիս պատրաստուած արգանակ (բուլիօն) են ուտեցնում:—Օրը մի անգամ թէլի գզալով շան զանդից թոնիրի վրայ չորացնելով պատրաստած փոշի են տալիս, հետը փոքր ինչ կինամոն (բորица) և մեխակ խառնելով:—Մեզը են տալիս:

Բլիթին, մաշկի կոչտ, մաղոլ.—Հինան շաղցւում են եղան լեղիով և դնում մազովի վրայ, —Ընկողի միջուկը միջուկը զառում են և դնում մազովի վրայ:

Բկացա:—Կթաւատը կաթով եփում և շորով կապում են ըկին:—Բերանը ջրախառն քացախով ողոզում են:—Ուսում են թթու, բայց դիւրամարս կերակուրներ:—Եիփաերիսի ժամանակ հիւանդին տալիս են խմելու նառաշաբարի (նաան հիւթը եփած մինչև թանձրանալը):—Սպիտակ հացի միջուկը կաթի մէջ թաթախում և թիկն են կապում:—Դագաթից արիւն են առնում կամ տղրուկ կպցնում.

Գլխացու:—Մազերը խուզում և ձուի սպիտակուցը շիպով (ևաս-ցի, alumen crudum) արորելով քացան շորի վրայ քած կապում են գլխին:—Ռաները տաք ջուրն են դնում:—Ճակատից արիւն են առնում:—Բողկի կտորները քացախի մէջ թաթախուլով դնում են զլիխին և շորով կապում:—Սպանած ագռաւը ճեղքում են և դնում գլխին ու շորով կապում:

Գլխի ճարոց (Трецина головы).—Մի քիչ խունկ, թարմ կարագ, անասնի գեղ և մէթ խառնում, եփ տալիս, փոքր ինչ հովացնում և դնում ճաքածի վրայ:

Գործուկ (Бородавка).—Աքեթից կոնուսաձե, գորտնուկի մեծութեան համեմատ, կարտում են և դնում գորտնուկի վրայ ու վառում: Տաքութիւնից գորտնուկը չորանում և պալթում է. ապա երեք-չորս օրից ոչնչանում:

թանձր, թութք, մայամի (Геморроид).—Կարում են ծծմկները և կողի նոր կարագի հետ մի քիչ սուլումէն (սւեմա, hydrargyrum bichloratum corrosivum) խառնած բամբակով քառոմ վրան։—Զգուշանում են կաթնեղենից։

Լուծ, կանիճ, փորմարինը (Поносъ).—Մածուն են ուսումն և թան լումում։

Թիսորկի, էւսանէն. (Бобонъ въ пахъ).—Սվիում են աղկուսատի (և շեշտևան, գերչակի) մի քանի ծեծած սերմ և մի քիչ ծեծած կթաւատ մի բաժակ կողի կաթի մէջ և բոլորը խառնում ենիսած փիփերթի (և այլն) հետ և նորից եփում, մինչև որ թանձրանում է. ապա կապում են ուսուլցքի վրալ, որից նա տաքանում և ծակւում է թարախից մաքրելու համար ձուի գեղնուցը տղկանատի ձէթով և զարու ալիրով շաղւում և քաշում են վերքի վրալ։

Կորցոց (Воль въ боку).—Կողդքին մի կտոր տաքացրած աղ, կամ մի քսակով տաքացրած կորեկ են դնում։

Հոգ.՝ Եղեգնաշաքար, ունար, սերկելիլի սերմ և մանուշակի ծաղկի ի միասին եփում են և ջուրը քիշ-քիշ խմում։—Չորացրած թուզը թրցում են օղիում, գիշերով զնում ապատ օդում և առաւօտները անօթի ժամանակ մէկ-մէկ հատ ուսում։

Հորուխ.՝ Սառն ջրով լուանում են վիզը, և քիթը սառը ջուր քաշում։—Քեսափիրին (камфора) և շիրը (квасцы) ծեծում, լցնում են օղու կամ սպիրուի մէջ և քիթը քաշում. քրտնելուց լետով եռացրած զինի են խմում։

Մատնաշուր, մատնաշուն. (Ногтохъ).—Երբ մատնաշունչի պատճառով ձեռքը ուսումն է՝ փիփերտը (մալվա, malva rotundifolia L.) եփում են, մէջը հացի միջուկ ձգում և հանում տաք-տաք ուսուլցքի վրալ կապում. երբ ուսուլցքը փափկում է՝ եղունգի տակը ծակում են, որ շարաւը թափի, և վրան դնում թոկի քրքրած թեւերը, նոր կարագ և լուսցքի հասարակ, ծեծած սապոն խառնած. Երբեմն էլ արև վերջին գեղին ձուի գեղնուոց էլ են խառնում։

Մորթոր (Чесотка).—Ընկույզի միջուկը ծեծում, վրան թունդ գինու քացախ են ածում, մի օր պահում և ապա քսում են մոլոքոր գուրս տուած տեղերը։

Ուկրաց աւ (Воль въ kostochъ).—Հողաճիճուները ձէթի մէջ եփում են, մինչև որ նրանք չորանում և ալլուսում են, և ապա արդ իւղով տրորում ցաւած տեղերը։—Մի մեծ շիփ մէջ ածում են 2 ֆ. չմարած կիր, 1/2 ֆ. անուշաղը (Bашатыръ, ammonium chloretum), 2 մախալ քափուր (камфора, camphora), ապա անելացնում երիտը ֆունտ ջուր, մեղմութեամբ ցնուում, թառ քիչ հովացնում, 1/2 ֆ. վուշի ձէթ, (խնյաное масло) խառնում և քսում ցաւած տեղերին։

Մաքուր թեմինսիէժով (секонидаръ, oleum terebinthinae) սծում են ցաւած տեղերը:—Բազի Խինուեղն (бузина) կոչուած բոլոխի ծաղկները ալիւրի թեփի հետ եփում են, լցնում տաք լոգարանի (ванна) մէջ և հիւանդին նաևցնում մինչև քրանելը:

Զորմ.—Ջմերուկի, վարունգի, դդմի և տղիանատի (զերչակ, клемщевина) սերմերը ծեծում և հիւթը խմացնում են:—Հիւանդին կապերակի մէջ դրած ընկղմում են զետի մէջ և ապա պառկեցնում ու տաք ծածկում, որ քրանի:

Սուսանակ (Триперъ).—Մի շիշ 86° սպիրտի մէջ ածում են 8 մսխալ կոպալի բալասան (копаискій бальзамъ) և 5 մսխալ բորակ (селянтра), և օրը երեք անգամ մի-մի օգու բաժակով ընդունում:

Վաւորիստ, Ցերամոր վէրը, ֆրանկի եարա (сифилисъ). Դիմի մազերը ածելում են, կարագ իւղով տրորում են սուլէմէնը (սուլէմանի, судея) և բամբակով զնում ախտացած տեղի վրալ:—Վարդայիր (розовая вода, aqua rosagum) մէջ լուծում են մի քիչ հիւակ և հաղուէ (сабуръ, aloë) և սրանով տրորում են զլուխը և քաթանով կապում: առաւատները շաքարով թէլի կէս զբալ ծծումբ (себра) են ընդունում:—Մնդիկը հինալի հետ շաղուում են վարդայիրով և փոքրիկ զնուակներով չորացնում: լետու ալս զնուակներից մի-մի հատ զնում են անծուխ կրակի վրալ և հիւանդին սաւանի մէջ փաթռած՝ կանգնեցնում առդ կրակի վրալ և ծուխ տալիս:—Ընկորդի տերեններ ձգելով լոգարանի (ванна) մէջ մտնում են մէջը:—Հինգ: մսխալ շիր (квасцы), մի փունտ կազնու տերեն, մի մսխալ նուան կեղև միասին եփում են ջրով և բերանը ողողում:

Փայծտղի աճումն (увеличение селезенки). Շան թիսոկին մեղք են քսում և նրանով խփում փարթազի եղած տեղին:—Վախեցնում են հիւանդին, սրով վրան բարձակուելով:

Փորափու (Боль въ животѣ).—Մի բաժակ օգու մէջ փոքրինչ պղպեղ (англійскій перещь) են ձգում և խմեցնում, և կամ զարշինով, (корица) կինամոնով (զանձափիլ) և պղպեղով պատրաստած թէլ տալիս:

Փորի ճիճու, երիգորթն. (Солитеръ) ուտում են մեղքով ճառվար (цистварное съмв; sexten sautonica) և կամ դդմի կուս:

Քարիիլ. —Բոկոտն ման զալուց ոտքի վրալ լառաջանում է կոշտացած մաս, որ սաստիկ ցաւ է պատճառում: Նախ խմոր են զնում վրան, որ փափկանալ, լետու նաւթի ճրագի մէջ մնացած և թանձրացած մասը, մերագի տակը, քսում են շորի վրալ և զնում վրան: Երկու-երեք օրից լետու ասեղով ծակում են, որ շարաւը հոսի և առողջանալ:

Օթի հծած. —Կծած տեղին մածումն են քսում:—Յալտնի կանալք-կան, որ ծծում դուրս են քաշում թողնը: